

ԲԱՌԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝
ԿԱՊՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
արդի հայերենի բաժնի գիտաշխատող
էլփոստ՝ tatevik.safaryan1979@gmail.com

Հեղագոյությունն նպատակն է բառի հնչյունակազմի հետ կապված սխալների ուսումնասիրությամբ ընդհանրացնել այն օրինաչափություններն ու միությունները, որոնք հանգեցնում են այդպիսի շեղումների, այդ կերպ ցույց տալ դրանցից խուսափելու և դրանք հաղթահարելու ուղիները: Խնդիրները բառային կոնկրետ օրինակներով հնչյունների անհարկի հավելումների կամ սղումների, նմանաբանությամբ ոչ ճիշտ ձևերի և հնչյունափոխության ներառումների, դրանց բարբառային և խոսակցական կամ գրաբարյան ակունքների բացահայտումն է և դրա տեսանելի հաստատումը բառացանկի միջոցով: Այդ խնդիրները իրագործվում են բառակազմական, պատմահամեմատական, հարկ եղած դեպքերում՝ սրուգաբանական վերլուծական մեթոդներով: Հեղինակի հիմնական եզրահանգումները այն են, որ հնչյունակազմի հետ կապված սխալներն առաջանում են հավելումների ու սղումների, դրափոխության ու հնչյունափոխության արդյունքում, և որքան էլ դրանք երբեմն կայուն գործածության են հասել, միևնույն է, հնարավոր է հաղթահարել այդպիսի սխալները:

Բանալի բառեր՝ բառագործածական, հնչյունակազմ, նմանաբանություն, հնչյունների հավելում, բառակազմություն, միջնահնչյուն, վերջնահնչյուն, տառաբացթողում, դրափոխություն, հոդերի փոխադրում, գրաբարյան ձևեր:

Լեզուն կենդանի օրգանիզմ է՝ զարգացող ու փոփոխվող, հանրայնորեն ամենաշատ գործածական միջոց: Բնական է, որ դա տարաբնույթ սխալների ներթափանցման հնարավորություն է ստեղծում, ընդ որում՝ երևույթն այնքան հաճախադեպ է, որ հեշտ չէ խմբավորել բոլոր սխալները և կանոնակարգել դրանք: Հաղորդակցական գործառույթի ընթացքում դրանց փոքր մասը, կապված նաև աշխարհաքաղաքական փոփոխությունների



հետ, կարող է դուրս մղվել (ինչպես «ստոլ»-ը, «դիրեկտոր»-ը, «ակոշկա»-ն), մի մասը օրինականացվել որպես լեզվական օրինաչափ փաստ (ինչը նկատելի է «ոչ մեկ», «որոշներ» և այլ սխալների գրավոր գոյության հաստատումներում): Անկախ ամեն ինչից՝ սխալի դեմ պետք է պայքարել՝ չմոռանալով, որ լեզվի ամեն մի աղճատում ազգայինի աղավաղում է նշանակում: Այսօր այդ պայքարը բավականին հետևողական է դառնում, հրապարակվում են ուսումնագործական ձեռնարկներ, հոդվածներ՝ առավելապես հասցեագրված դիմորդ-աշակերտներին և ուսանողներին: Որքան էլ երևույթը ուսումնական ու հրապարակախոսական շեշտվածություն ունի, սակայն իր տարածականության վտանգի առումով գիտավերլուծական հիմնավորումներ ևս պահանջում է:

Սխալներն ու շեղումները, որպես կանոն, ունենում են անհատական և ընդհանրական բնույթ, սակայն անհատից կամ սոցիալական փոքր խմբից ծնված անգամ վրիպակը կարող է որոշակի հանրային ընդգրկունության հասնել: Կփորձենք շեղումների դասակարգումը կատարել ըստ լեզվաբանական մակարդակների՝ դիտարկված օրինաչափությունների մեջ ներառելով փաստացի և տիպական շատ տարածված դեպքեր:

Բառագործածական սխալների մի մասը ավելի շատ պայամանավորված է արտասանական- հնչյունական հանգամանքներով: Կան բառեր, որոնք խոսակցական լեզվում ձեռք են բերում հավելյալ հնչյուն:

Հավանաբար «տասնյակ, հարյուրյակ» և նման բառերը անուղղակիորեն պատճառ են դառնում «սյունյակ, պայուսյակ, աղյուսյակ» սխալ ձևերի առաջացմանը: Բայց այս բառերը պարզապես բաղադրվել են –ակ վերջածանցով:

Ինչպես հնարավոր է, որ «հետնորդ, առաջնորդ» բառերի ազդեցությամբ է առաջացել «ավելնորդ» սխալ ձևը, իսկ «կանանց» բառի ուղղակի հետևողությամբ գործածվում է «կանանցի» սխալ ձևը: Այս նմանաբանությամբ «ն»-ի անտեղի հավելումներ են առաջանում «ամանչել, կամանց, ճանանչել, կանանչ, արտասունք» բառերի մեջ: Եթե «մանրունք» սխալ ձևի ավելորդ «ն»-ն ածանցի, որպես արմատի հնարավոր շփոթմունքի, արդյունք կարող է լինել, ապա «բարձրունք» բառի մեջ «ր»-ի անհարկի ավելացման պատճառը «բարձր» արմատն է:

«Ն»-ի հավելումով ոչ ճիշտ ձևեր են առաջանում գրաբարյան «ձեռն» արմատից կազմված որոշ բառերում՝ «անձեռնոցիկ» (անձեռոցիկ), «ընձեռնել» (ընձեռել), ինչպես որ «ա» հոդակապի անհարկի հավելումը հանգեց-

նում է այսպիսի սխալների՝ «ծեռնատու» (ծեռնտու), «թույլատվություն» (թույլտվություն): Հնչյունների անտեղի հավելումի կամ սղման, բառարմատի սխալ ընկալման արդյունքում դրանց փոխատեղման երևույթն են «դաստիրակ, գն-հատել», «երկպառակություն» ոչ ճիշտ բառեր (Հիշենք ճիշտը՝ «դաստիրակ, գնահատել», «երկպառակություն»): Իսկ «ոյութագուն» սխալը ծնվել է այն թյուր ըմբռնումից, որ այդ բառի արմատը «ոյութ»-ելն է, մինչդեռ «դիք-դից»-ն է (աստվածներ-աստվածների), որից և ճիշտ ձևն է «ոյուցագուն»-ը (աստվածների որդի, սերունդ):

Որոշակի օրինաչափություն են ձեռք բերում «ի» ձայնավորով վերջացող բառերի և «ական» վերջածանցով կազմության շեղումները. «ընտանի - ական»-ից պետք է «ի-ա =ե» ձևափոխությամբ կազմել «ընտանեկան» և ոչ թե «ընտանեական» բառը. նույն կերպ «պատանի-ական»-ը ստեղծում է «պատանեկան» և ոչ թե «պատանեական» (երբեմն նույնիսկ «պատանեկական»), «հարսանի(ք)-ական»-ը՝ «հարսանեկան» և ոչ թե «հարսանեական» բառերը: «Օրեկան, ամսեկան» սխալ ձևերը կապվում են «իա» միացության անհարկի հավելումի հետ: Բաղադրիչները ոչ թե «օրի-ական, ամսի-ական» կազմությունն են, այլ «օր+ական=օրական, ամիս+ական=ամսական» ածանցումը: Իսկ «կաշի-ա-գործ» բաղադրիչներից պետք է կազմել «կաշեգործ» և ոչ թե «կաշվեգործ» բառը: «Տարկետում» և ոչ թե «տարեկետում» բառը չի կազմվում «տարի» արմատից՝ «տարի-ա-կետում» բաղադրությամբ: Այստեղ «տար» արմատն է, որն ունի «տարբեր, այլ» իմաստը, և «տարկետում» նշանակում է այլ ժամկետ տանել, որոշ ժամկետով հետաձգել:

Բառագոտագործման շեղումների որոշակի խումբ է առաջանում նաև միջնահնչյունը կամ վերջնահնչյունը դուրս թողնելով, որտեղ կարող է դեր խաղալ խոսակցական լեզվի հակումը համառոտաբանության և սղումների նկատմամբ: Վերջնահնչյունի դուրս թողնման արդյունքում են առաջացել «ընդհակառակ (ընդհակառակը, ընդհակառակն), ընդամեն (ընդամենը), պատճե (պատճեն), նախագա (նախագահ), ասեկոս (ասեկոսե)» բառերը: Շատ արագ տարածվեց ու կենսունակ դարձավ «ոչ մեկ» կոպիտ սխալը: Հայերենի չորս ժխտական դերանուններից «ոչինչ»-ը հատկանիշ է ժխտում, «ոչ մի»-ն՝ իր, իսկ «ոչ ոք» և «ոչ մեկը» ունեն անձի ժխտման դերակատարում և այդ հիմքի վրա՝ իմաստային ավելի ընդգծված շփումներ: «Ոչ ոք» դերանունը երբեք չի գործածվում որոշյալ առումով, ինչպես «ոչ մեկը» չի կարող ընկալվել առանց «ը» որոշիչ հոդի: Բայց ահա, «ոչ ոք»-ի նմանաբանությամբ այսօր արդեն ընդհանրական է դարձել «ոչ մեկ» սխալ ձևը: Նույն

տրամաբանությամբ չէ՞, որ կարող էր հակառակը լինել. եթե հանգիստ օգտագործում ենք «Ոչ մեկ չասաց» սխալը, կարո՞ղ ենք կիրառել «Ոչ ոքը չասաց» նախադասությունը:

Տառաբացթողնման փաստը ակնհայտ է մանավանդ միջնահնչյունի անհարկի սղման դեպքում՝ «ե-կրորդ (երկրորդ), ա-ուր (այլուր), սն-նկանալ (սնանկանալ), գն-հատել (գնահատել), հար-ուր (հայուր), գործ-նեություն (գործունեություն), բարյաց-կամ (բարյացակամ)»:

«Վիրաբուժ, ակնաբուժ, հոգեբուժ» ձևերը սխալ են: Համապատասխանաբար այս բառերի համար հանձնարարական են «վիրաբույժ, ակնաբույժ, հոգեբույժ» ճիշտ ձևերը: Եթե բառային շեշտը ընկնում է վերջին վանկը կազմող -ույ-ի վրա, որևէ փոփոխություն չենք ունենում: Իսկ, երբ ածանց կամ արմատ է ավելանում, շեշտը տեղափոխվում է աջ և ունենում ենք ույ>ու հնչյունափոխություն. «վիրաբույժ-վիրաբուժական, հոգեբույժ-հոգեբուժաբան»:

Նման ձևով են կիրառվում նաև «համբույր-համբուրել, ողջույն-ողջունել» բառերը, որոնց համար ունենք սխալ «համբյուր-համբյուրել, ողջյուն-ողջյունել» ձևերը: Չպետք է շփոթել «ույ» երկհնչյունով զուգահեռ ձևերը և դրանց ճիշտ գործածությունը, ինչպես՝ «Հուսով եմ, որ չես մոռանա» և «Հուսով սպասում եմ պատասխանիդ» կազմություններն են:

Երկհնչյունների բառակազմական սխալ գործածության արդյունք են՝ պայթյունավտանգ (պայթյունավտանգ), եղբորյր (եղբոր), թուլատրել (թուլատրել)՝ շեղումները:

Բառագործածական շեղումների ծավալուն խումբ է առաջացել հնչյունների և մասնիկների հավելումներից և դրափոխությունից: Խոսակցական լեզվից եկող և հնչյունների դիրքի փոփոխությամբ են կազմվում «անգաճ, կարմունջ, դարդակ, բալանի, ալանի» և նման ձևերը: Մինչդեռ դժվար չէ հիշել ճիշտը՝ «ականջ, կամուրջ, դատարկ», իսկ «բանալի» բառի արմատը «բանալ-բացել»-ն է, ինչպես որ «անալի» բառի արմատն է «աղ-ի», որից՝ «անաղի-անալի»: Սխալ է նաև որոշիչ հոդի անտեղի հավելումը «վեցը գիրք, ութը մարդ» և նման կազմություններում, ինչպես որ ճիշտ ձևն է միայն «տասը հոգի, տասը դրամ», որովհետև հայերենը «տաս» գրությամբ թվական չունի: Նույն հիմունքներով պետք է հիշել, որ ինչպես սխալ են «տասերորդ, տասամյա» (ճիշտը՝ տասներորդ, տասնամյա), այնպես էլ «յոթներորդ, ութնամյա» ձևերը (ճիշտը՝ յոթերորդ, ութամյա): Այդպես և «յոթանասուն» թվա-

կանի նմանաբանությամբ օգտագործվում է «ուֆանասուն» սխալ ձևը (ճիշտը՝ ուֆսուն):

Հոդերի փոխատեղումների կամ անհարկի հավելումների ու սղումների հետ են կապվում «առնվազը» (ճիշտը՝ առնվազն), «այսինքը, այսինքս» (այսինքն), «ուրեմս» (ուրեմն), «երբեմը» (երբեմն), «մանրամասը» (մանրամասն), «և այլը» (և այլն), «երբեմը» (երբեմն), նաև «ընդհակառակ» (ընդհակառակը) շեղումները, իսկ արդեն «ն» հնչյունի ոչ տեղին հավելում կա «կապնվել, խաբնվել» և նման ձևերի մեջ: Հավանաբար «ներել» բայաձևի հետ են կապվում «ներեղություն» (ներողություն), իսկ «որևէ» բառի հետ՝ «որևհետև» (որովհետև) սխալները: Իսկ «հաշվանդամ» սխալի մեջ առաջին արմատը ոչ թե «հաշիվ»-ն է, այլ «հաշմ»-վածը, որից և ճիշտ գրությունն է «հաշմանդամ»-ը:

Որոշ սխալներ կապվում են գրբարյան ձևերի ներառումների հետ: Եթե «ի շնորհիվ» բառի փոխարեն պարզապես կարելի է կիրառել «շնորհիվ»-ը, ապա պետք է հիշել, որ գրաբարում ի նախդիրը ձայնավորից առաջ փոխվում է յ-ի, որը կարդացվել է **ի**՝ «յօգուտ- հօգուտ»: Ուստի սխալ է, երբ այժմ գործածում ենք «ի օգուտ, ի ուրախություն» ձևերը. պետք է լինի «հօգուտ, հուրախություն»: Նույն կերպ գրաբարում եղել է «ի զարմանս», որը այժմ հաճախ սխալմամբ արտասանում են «ի զարմանք»: Հավանաբար «սխալմամբ» բառի նմանաբանությամբ է գործածվում «իրավմամբ» ոչ ճիշտ ձևը. պետք է լինի «իրավամբ»: Այդպես նաև գրաբարյան ճիշտ ձևն է «ըստ արժանվույն»-ը, ոչ թե «ըստ արժանավույն»-ը:

Այսպիսով, հնչյունակազմի հետ կապված սխալներն ու շեղումները մեծ մասամբ ուղղակի կամ անուղղակի նմանաբանության հետևանքով են լինում, երբ նույն արմատից կազմությունները ավելորդ հնչյուն են վերցնում («ավելնորդ, ամանչել, կանանչ», նաև «ձեռնատու, ընտանեական»): Սխալ կազմության արդյունքում են առաջացել նաև «ամսեկան, տարեկետում» և նման բառերը: Բարբառային ակունքից եկող և ոչ ճիշտ դրափոխությունից կամ հավելումից են ծնվել «կարմունջ, ալանի» և այլ սխալ գործածությունները: Հաճախ են հանդիպում նաև որոշիչ հոդի անհարկի հավելումի («ուֆը գիրք») և սղման («ոչ մեկ») դեպքերը: Հնչյունական կազմի հետ կապված շեղումների որոշակի քանակ են կազմում հնչյունի սղման արդյունքում առաջացած սխալները («եկրորդ, սննկանալ, գնհատել»): Այդպես և օրինաչափություն է դառնում երկհնչյունների հետ կապված սխալը («վիրաբուժ, համբյուր-համբյուրել»): Հոդակապի հետ կապված շեղման արտահայտություն է

«յոթանասուն» բառի նմանաբանությամբ ստեղծված «ուֆանասուն» ձևը: Սխալների մի խումբ առնչվում է որոշիչ հոդի հետ («այսինքը, երբեմը»): Հնչյունական կազմի հետ կապված որոշ սխալներ փոխանցվել են գրաբարյան ձևերի ոչ ճիշտ ըմբռնումից («ի օգուտ, ի ուրախություն»): Սխալները բազմաբնույթ են, բայց նրանցից խուսափելն անհրաժեշտություն:

ՍԽԱԼ	ՃԻՇՏ
ալանի	անալի
ալուր	ալլուր
ակնաբուժ	ակնաբույժ
աղյուսակ	աղյուսակ
ամանչել	ամաչել
ասմեկան	ամսական
այսինքս / այսինքը	այսինքն
անձեռնոցիկ	անձեռոցիկ
առայժմ	առայժմ
առնվազը	առնվազն
առօրյական	առօրեական
ասեկոս	ասեկոսե
ավելնորդ	ավելորդ
արտասունք	արտասուք
բալանի	բանալի
բարձրունք	բարձունք
գնհատել	գնահատել
գործնեություն	գործունեություն
դաստիրակ	դաստիարակ
դարտակ	դատարկ
դյութագուն	դյուցագուն
եկրորդ	երկրորդ
եղբայր	եղբոր
երբեմը	երբեմն
երկպառակտություն	երկպառակություն
ընդամեն	ընդամենը
ընդհակառակ	ընդհակառակը/ընդհակառակն
ընձեռնել	ընձեռել
ընտանեական	ընտանեկան
ըստ արժանավույն	ըստ արժանվույն
թույլատվություն	թույլտվություն
ի զարմանք	ի զարմանս
ի ուրախություն	հուրախություն
ի օգուտ	հօգուտ

իրավամար կամանց կանանչել կանանցի կաշվեգործ կարմունջ համբյուր համբյուրել հաշվանդամ հարսանեական հարուր հոգեբարձու հոգեբուժ հողարկավորություն ձեռնատու ճանանչել մանկաբուժ մանրամասը մանրունք նախագա ողջուն ողջունել ոչ մեկ որոշներ պայթունավտանգ պայուսակ պատանեական պատճե ջղայն ջրօրհներգ սյունյակ սննականալ վայրկյանական վիրաբուժ տարեկետում ուխտադրույթ ուրեմս / ուրեմը քնքույշ քրիստոնյական օրեկան ֆիդային	իրավամբ կամաց կանաչել կանացի կաշեգործ կամուրջ համբույր համբուրել հաշմանդամ հարսանեկան հարյուր հոգաբարձու հոգեբույժ հուղարկավորություն ձեռնտու ճանաչել մանկաբույժ մանրամասն մանրուք նախագահ ողջույն ողջունել ոչ մեկը որոշ (իրեր, մարդիկ) պայթյունավտանգ պայուսակ պատանեկան պատճեն ջղային ջրօրհներք սյունակ սնանկանալ վայրկենական վիրաբույժ տարկետում ուխտադրուժ ուրեմն քնքուշ քրիստոնեական օրական ֆիդայի
--	--



Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973:
2. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Երևան, 2019:
3. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989:

WORD USAGE DEVIATIONS IN CONTEMPORARY ARMENIAN CONNECTED WITH SOUND COMPOSITION

SAFARYAN TATEVIK

PhD in Philology

Scientific researcher Department of Modern Armenian

Language Institute named after H. Acharyan

e-mail: tatevik.safaryan1979@gmail.com

Errors and deviations from the word are mostly a direct or indirect result of analogy where the formations take an extra sound from the root e.g («ավելնորդ, ամանչել, կանանչ», նաև «ծեռնատու, ընտանեական»): As a result of erroneous formation, the following errors have been developed «ամսեկան, տարեկետում» and many more. «կարմունջ, ականի» and other wrong usage of the words have been originated from the dialect and wrong methatesis or additions. Often one can observe an unnecessary addition of the definite article («ուֆը գիրք») and the cases of word reduction («ոչ մեկ»). A certain number of deviations due to sound composition create errors in word reduction («եկրորդ, սննկանալ, գնհատել»). In such way the error of double sounds becomes of norm («վիրաբուժ, համբյուր-համբյուրել»). The word «ուֆանասուն» is a deviation of linguistic joints created as an analogy of the word «յոթանասուն». A group of errors is related to definite article («այսինքը, երբեմը»). Some errors of sound system have been transformed from a wrong understanding of Grabar («ի օգուտ, ի ուրախություն»): The errors are of different composition but it is necessary to bypass them.

Key words: *word usage, sound system, analogy, addition of sounds, word formation, middle sound, final sound, letter omission, change, replacement of joints, Grabar forms.*

ОТКЛОНЕНИЯ В СЛОВООБРАЗОВАНИИ, СВЯЗАННЫЕ СО ЗВУКОВЫМ СОСТАВОМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

САФАРЯН ТАТЕВИК

Кандидат филологических наук

Научный работник отдела

современного армянского языка

Института языка имени Гр. Ачаряна НАН РА

электронная почта: tatevik.safaryan1979@gmail.com

Ошибки и отклонения, связанные со звуковым составом слова, в большинстве случаев являются следствием идентификации однокоренных слов, когда при образовании слов добавляются лишние звуки («ալելնորդ, ամանչել, կանանչ», также «ծեղնառու, ընտանեական»). В результате неправильного словообразования появились такие слова, как «ամսեկան, տարեկետում». Например, такие слова, как «կարմունջ, ավանի», возникшие из диалектов, родились вследствие ошибочных звуковых изменений или прибавлении. Также часто встречаются случаи неуместного употребления определенного артикля или его удаления, например «նբը գիրք» и «ոչ մեկ».

Определенное количество составляют отклонения, которые появились в результате ошибочного проглатывания звука («եկորդ, սննկանալ, գնհատել»). Итак, ошибки, связанные с произношением двойных звуков, становится закономерностью («վրաբուժ, համբյուր, համբյուրել»). Также выражением отклонения является употребление соединительной гласной в слове «յրանիսուն» и образование слова «նբանիսուն» по принципу сходства.

Группа ошибок относится к употреблению определенного артикля («այ-սինքը, երբեմը»). Некоторые ошибки, связанные со звуковым составом слова, передались от формы грабара и его неверного восприятия («ի օգուտ, ի նրա-խոթյուն»). Ошибки разнообразны, но необходимо избежать их.

Ключевые слова: *словоупотребительный, звуковой состав, тавтология, прибавление звуков, словообразование, срединный звук, конечный звук, пропуск букв, трансформация, перестановка артиклей, формы грабара.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 15.09.2021թ.: